

Անհայի ժապաւինով պարանոցին կրելու, և
մի արծաթեայ մէղալ կարափետ թէզլարեա-
նին, կրծքի վերայ կրելու համար։ Սինօդը
վճռեց մէղալները ուղարկել Բեսարաբիոյ կոն-
սիստորիան՝ ըստ պատկանելոյն յանձնելու հա-
մար։

13 մարտի. Սինօդը վճռեց հրամայել
թեսարարիոյ և Նոր Սայսիջեանի կանախառ-
ութիւն հրէուչի Աննա Մարկովնա Ազմից-
կուն մկրտութեամբ ընդունել հայոց եկեղե-
ցու ծոցը։

ՅԱԻԵԼՈՒԾԸ ԵՐԵՎԱՆԻ 1898 Թ. ՄԱՐՏ և ԱՊՐԻԼ.

ՄՈԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՐ

Ե. Ի.

ՄՈՎ. ԱԼ Խ Ա Բ Ե Ն Ա Ց Ի .

Այս երկու պատմագիրների վիճակը զարմա-
նալի կերպով կապուեցին միմեանց չետ։ Երկուսի
առընչութեան խնդիրը՝ զանազան տեսակի կարծիք-
ների և քննութեանց ենթարկուելով, այժմ երե-
ւում է թէ վախճանական լուծման է հասնում։ Դեռ
միայն մի քանի ամիս է անցել Սոկրատի պատմու-
թեան հրատարակութիւնից, որի յառաջարանի մէջ
այնպիսի արդիւնքների էի հասել, որ համոզուած էի
թէ վերջնական է լինելու և ահա շնկատուած։ ու-
շադրութիւնից վրիպած մի փաքրիկ, աննշան հա-
տուած այսօր յեղաշրջել է իմ համոզմունքը և ես
ստիպուած եմ թողնել բաժանուել իմ երկարժա-
մանակեայ հաստատուն կարծիքից և միանալ նոցա-
չետ։ որոնք վազուց փոխել են իրենց հայեացքը մեր
Պատմահօր մասին։ Այսօր ինձ համար էլ իրողու-
թիւն է, որ Մալուս Խորենացու անունով մեր ձեռ-
քը հասած Հայոց Պատմութիւնը այլ ես չէ կարող
և դրա գարու գործ համարուել։ Ես Սոկրատի հրա-
տարակութեան յառաջարանի մէջ ընդարձակ տեղ
էի տուել Սոկրատի, Սեղբեստրոսի և Խորենա-
ցու պատմութիւնների փոխառութիւններին։ իմ
նպատակից դուրս է եղել քննել Խորենացու ինդի-
քը ամբողջութեամբ։ այլ ես փորձել եմ որոշել մի-

միայն յիշեալ գործերի մասին յայտնած կարծիք-
ները։ Իմ ստացած արդիւնքի էական կէտերը ոռ-
քա են։

ա. Խորենացին անկախ է Մեծ և Փոքր կա-
զուած Սոկրատներից, ինչպէս նաև Սեղբեստրոսի
վարքից։ Դա դոցանից ոչ մէկից չէ օգտական՝ ոչ յու-
նարէն բնագրից և ոչ էլ հայերէն թարգմանութիւնից։

բ. Յիշատակարանների տուած հաստատուն
վկայութիւններով գտել եմ Մեծ Սոկրատ և Սեղբեստ-
րոսի վարքի հայերէն թարգմանութեան տարբները և
հաւանական հիմունքներով որոշել Փոքր Սոկրատ կը բա-
ժատման ժամանակը։

գ. Պրոֆ. Կարիկերի և ուրիշների հետ
ընդունելով որ կապ կայ Խորենացու և Փ. Սոկրա-
տի մէջ, պնդել եմ նոցա գէմ որ Խորենացին է
միրջինին ազրիւր ծառայում։ որը համառօտուել է
և դրա գարում։ Հետեւապէս Խորենացին այդ ժամա-
նակ արգեն կար և տարածուած էր, ուրեմն նրան
չէ կարելի և կամ Թ. գարը բերել։

Գրքիս հրատարակութիւնից շատ չանցած քըն-
նական յօդուածներ լիյս տեսան։ Պ. Սա. Մայմա-
սեանը գրեց «Մշակ» 1897 № 113-ի մէջ։ Նա ընդու-
նումէ իմ եղրակացութիւնները։ Պրոֆ. Գր. Խայ-
թեանը աննարնդաձակ քննութիւն տուեց «Հան-
գէս Ամսօրեայսի 1897 թ. Հոկտ. նոյ. և Դեկտ.
ամսահամարներում։ որտ մասին իմ ասելիքը ստո-
րե է, Գեր. Սահակ եպիսկոպոսը տուել է Սոկրա-
տի պագրի և, զրբի և Երուսաղէմի ձեռագրի տար-
բեր ընթերցուածները։ իւր գիտողութիւններով
«Արարատ»ի մէջ, զրա մասին ևս արգեն գրել եմ նոյն
«Արարատ»ում՝ 1897, Անգլ. Հոկտ. (էջ 406-411-ի)։

Դարձեալ նոյն տեղը (էջ 422-424) Գլ. Տէր Մկրտչեանը քննելով Խոր. ժամանակի խնդիրը իւր նոր գտած փաստով ընդունում է իմ կարծիքը՝ միայն Փ. Սոլորատի մասին: Եւ ի վերջո Հ. Բ. Սարգսեանը Բազմավեպի մէջ 1897. Դեկտ. (էջ 565-575) յայտնում է, որ Սոլորատի հրատարակութիւնը մէծ պակասութիւնն իւր ունի, որովհետև իր ուղած ծրագրով չեն հրատարակել և որ հրատարակչի յառաջաբանի մէջ մի բան չկայ ասուած: որ ինքը իւր հմալից յօդուածներում արդէն ասած չլինէր:

Այս քննադատութիւնները, մանաւանդ Պրոֆ. Խալաթեանի և Գ. Տէր Մկրտչեանի՝ նոր կռուաններ են առուել խնդրի լուծման համար, ուստի հարկ եմ համարում՝ պատասխանելով նոցա վերտափն քննել և ուղղել յառաջաբանիս մի քանի հետերը և ասել թէ՝ ինչ անհրմն բաններ կան նոցա ասածների մէջ:

Իմ արած մէծ սիսալլ Սեղբեստրոսի ընդարձակ վարքի մի հատուածի և Խորենացու պատմութեան թ. 83 նմանութիւնների կուռադատութեան մէջն է եղել որովհետև թէ դոցա մէջ ակն յայտնի նմանութիւն կայ, այդ ես տեսուել եմ և շեշտել. «Խորենացին և Ընկարակի վարչի կարելի է ասել պատացի արագրում են նոյն արքիւրից: Խորենացին համառուսում է» (էջ ԾԱ), իսկ մի ուրիշ անդամ ասել եմ: «Խորենացին Սեղ. համառու վարքի հետ համաձայնելով հանդերձ, ունի ակնյայնի տարրերութիւններ, դուրս է գալիս այն, որ նա մանաւանանուրեանց մէջ Ընկարակին է նման: Ալն (էջ ԾԱ): Ես ստորեկրացարեմ թէ ինչն է ինձ շփոթեցրել և ուղիղ եղացացութիւնից հեռացրել: բայց ինդիրը վըճռողը այնքան էլ իմ բաղդատած հատուածը չէ: այլ մի ուրիշ մէծ, բառացի արտագրած հատուած, որը վրիպել էր իմ ուշադրութիւնից և որ աւելանալով առաջնին վրայ՝ այլ ես կասկածի տեղիք չէ թողում:

Այդ հատուածը Սեղբեստրոսի ընդարձակ վարքի այն կտորն է, որի մէջ վարբագիրը գեղեցիկ խօսքերով նկարագրում է իւր գոված սրբի հոգեկան բարձր յատկութիւնները և Մ. Խորենացին հոյերն իւրի մասնաւութեան նշյալը փոխ առնելով չնշին և այն էլ զիտակցական փոփոխութիւններով յատկացրել է ս. Մեսրոպին: Հատուածի նմանութիւնը միաժամանակ և միմեանցից անկախ նկատել են պ. պ. Նորայր Բիւղանդացին, Գրիգոր Խալաթեանը և Գալուստ Տէր Մկրտչեանը, երեքն էլ Խորենացու պատմութիւնով մասնագէտ պարապազներ: իսկ ես Խորենացիով առանձնապէս մինչեւ օրս չեմ պարապած, և չէի կարող հետեւապէս Սեղբեստրոսից—Մեսրոպ՝ այդքան հեռու անձանց վարքերի մէջ որև է նմանութիւն որունել և գտնել:

Խնդրական հատուածները արդէն Պրոֆ. Խալաթեանի և Գ. Տէր Մկրտչեանի վերջիշեալ յօդուածներում առաջ են բերուած և պարզաբանուած:

սակայն խնդրի լուսաբանելուն համար իմ պարզաբանութիւններով այստեղ կդնեմ:

Դախապէս պէտք է իմացած՝ որ երեք միմեանցից համարեա անկախ զրբեր կան, որոնցից իւրաքանչիւրի առնչութիւնը Խորենացու հետ հարկաւոր է ապացուցանել կամ չերքել:

Դոցանից ժամանակով ամենահինն է Հռոմայ Սեղբեստրոս պապի ընդարձակ վարքը, որը թարգմանուել է հայերէն «Արասուն Գրիգորի Զորյափորեցու» ձեռքով: Կամսարականների փեսայ Արաց ներսէ իշխանի՝ հրամանաւ (Տ. յառաջ. էջ 2Ե) փրկչական 678 թուին: Բացի Հ. Բ. Սարգսեանից, միւսները ընդունումեն այս թուականը, որ առնուած է հաստատուն յիշատակարանից: Այս գործի բուն բնագիրը իւր ներկայ գրութեամբ գրուել է Ե. գարու վերջերում՝ լատիներէն: իսկ Զ. ի սկզբները թարգմանուել է յունարէն լեզուով, ² միայն Է. րդի վերջին կիսում յունարէնից հայերէն:

Երկրորդն է Սոկրատ Աքոլաստիկոսի Պ. դարում յունարէն լեզուով գրած ընդհանուր Եկեղեցական Պատմութիւնը. Փիլոն Տիրակացին ուղիղ 695—696 թ. նոյնը թարգմանել է հայերէն: Թարգմանութիւնը ատքելու առնուած է Երուսաղէմի ձեռագրի մի յիշատակարանից, որի մէջ կան հինգ համագումանուններուն (synchronismoi) տարբեթուեր (տ. յառաջ. էջ 2Գ—2Ե). գարձեալ նոյն Հ. Բ. Սարգսեանը ընդդեմէմ և միւս քննադատների փորձում է մի մէծ գիւտ անել և ապացուցանել, որ այդ թարգմանութեամբ յաջող կիրագով պիտի պարզուի Խորենացու կնճիռն, եթէ ընդունինք (?), որ գա՞ ոչ թէ 696-ին: այլ 1. և ու Բ կայսեր առաջին տարին: այն է 474-ին կարելի է (?) որ Թարգմանուած ըլլայ՝ փոքրը թարգմանիչներէն միջյան ձեռքով: Յ մենք մընալով մեր կարծիքի սպասենք և յուսանք:

Աերջապէս երրորդն է Փոքր Սոկրատ Կոչուածը, որ առաջին երկու գործերի հոյերէն նորութեան նույնաւութեան է ի մի ձուլուած, այնպէս որ առ ին գիրը է ներկայացնուում: Սրա տարբեթիւը յայտնի չէ: մօտաւորական հաշիւներով ենթագրական ժամանակը համարել եմ Է. րդ գարի վերջը: Տեր պատմագիրներից իմ գտած ամենահին տեղեկութիւնը ինձ հասցրել էր միայն մինչև Փ. գրաց բայց յետոյ Գալուստ Տէր Մկրտչեանը Անանիա Մոկացու

¹ Անդունում եմ Գր. Խալաթեանի տաճը Արշարունական Գրիգոր Եպիսկոպոսի մասին (Տես երա յօդուածի էջ 290):

⁵ M. l'abbé Duchesne. Le liber Pontificalis etc l. p. cix et ex.

² Տես Բազմավեկ 1897 Խելքեմբերի էջ 574—575: Հետարքիւն այն է որ Հ. Սարգսեանը շինք համաձամանի բուհը մի կողմէ ի բոլիք և չցիւնեն ինչ հիման վրայ՝ ուղղի և համարում դոցամից միայն մեկը: իսկ միւսները:

թղթերի մէջ գտել է Սոկրատի յիշատակութիւնը։ Մոկացին իւր մի թղթի մէջ, «Յաղագս որ ասեն թէ մի պատրւ հայրապետին և եպիսկոպոսին և վասրն մի լինելոյ կոչմանն»։ 1. խօսելով հայրապետական աստիճանի մասին հարցնումէ։ «Ղի՞նչ իմանաս զիուրիդածուրեանն ժամն զոր թագաւորն հրամայէր ի վերայ Պրոկիի, յորժամ յեպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն կոչեն ըստ շահութեանու։ Առաջ Այդ յիշատակութեան մասին Գ. Տ. Մկրտչեանը (յ. տ. էջ 279 օն.) այս բացատրութիւնն է տախիս։ «Բայց աւելի արժանի է ուշագրութեան Անանիայի մէջ բերած «զիսորհրդածութեան ժամեա» ասացուածը, որ անպայման Փ. Սոկրատից է և մեծումը չկայ (տես Մեծ և Փաքք Սոկր. երես. 673), Այս վկայութեամբ անպայման ապացուանում է, որ տասկերպոյ դարում Սոկրատի Եկեղ. պատ. Փոքր իմբրագրութիւնը արդյուն կար եւ ծանօթ ու տարածուած գրուած էր։ Սրանով գտնուել է Փ. Սոկ. ամենաուշ ժամանակուայ հաստատուն սահմանը։

Այժմ տեսնենք թէ այս երեք գրքերից որն է Խորենացոց օգտուել կամ հակառակը։ Բարեբախտաբար նոցա գրութեան ժամանակները յայտնի են, որով և մեծ զիւրութիւն են տալիս Խորենացու պատմութեան ժամանակի հնագոյն սահմանը գտնելու գուցէ նաև վերջին սահմանը։

Ա.

ՍԵՎԵՐՆԵՍՏՐՈՒ ԸՆԴԵՐՉԱՅԿ ՎԱՐՔԸ ԵՒ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մինչև այժմ նկատուած են երեք նման հատուած, երկուը մեծ, մէկը փոքր։ մեծերից մէկը քաղուածօրէն է, միւսը համարեա բառացի, և այդ է որ չէի նկատել։

1.

ՎԱՐՔ ՍԵՎԵՐՆԵՍՏՐՈՒ էջ. 699. ՄԱՅ. ՍԵՎ ԽՈՐԵՆԱՑ Գ. 67.

... Ան (Սիլվեստրոս) բարեկառապու բարեկառապու քան զբուր վիրաբանացեալ քան զբուր վիրաբանացեալ քան զամենայն ճակարոսն։

Վասն զի ամբարտաւանութիւն և մարդահանցութիւն առ ի նորու վար տեղի գտանել ու ուժը ու կորակուացն, այլ չեղ և բարիսկամ և բարեկառարդ գուզը, և երե նայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքը բարեկառ գուզը ցուցանել։

Վասն զի գոյր տեսեամբ հրեւտական, բանի արտմազայժառապեալ, գործով տարբ, մարմանու արտափայեալ սորտիւա։

1 Տես «Արարատ» (1897 թ. Յունիս. էջ 277 և էջ 283) Հրամ. Գ. Տես Մկրտչեանի։

առհամա, խորհրդակցութեամբ մէծ, սորտիւա անձաւա, խորհրդակցութեամբ ուզիկ, յուսով համ ցութեամբ մէծ համառավ ուզիկ, բերութիւնն սիրով անկեցնուոր, յուսով համերոց, սիրով անկեցնուոր, յուսուանելով անձաւա ծրոյք։

Այլ վասն զի զրուորն նորս զուզութիւնն աշ եմ բառական թիւն նորս ու եմ բառական առեւ, ու ի մասնաւրականն սել, ի մասնաւրականն սոր հիմարագործեցաւ զարձացից զբան։ 4 ցը գործուցից զբան։

Ահա այս նշանաւոր հատուածն է, որ պէտք է ամենավճռ ողական նշանակութիւն ունենայ Խորենացու ժամանակը որոշելու խնդրում։ Ամենաասեսակ և մթագրութիւն՝ թէ կամ Խորենացն է յունարէնից Խորեն գարում թարգմանել և պատահարար այդքան նմանուել է թորդ գարու թարգմանչին։ կամ թէ էրդ գարու թարգմանիչն է այդ կոտրի թարգմանութեան ժամանակ ազգուել Խորենացուց։ Պը ժուար և անհիմն ենթագրութիւններ կմնան։ մանաւանդ որ միայն այս հատուածը չէ Խորենացու փոխառութիւնը։ Իմ կարծիքով միայն մի ճանապարհ կայ Խորենացուն յետ՝ իւր ժամանակը տանելու, այդ այն է թէ ցոյց տրուի, որ Սեղմեստրոսի վարքը աւելի շուտ է թարգմանուած, քան ձեռագրի յիշատակարանն է ցոյց տալիս, որի գէմ են սահմայն մեր ունեցած հաստատուն յիշատակարանը և թարգմանութեան լեզուն։ 2 Համեն մատութեան մէջ սորուագուած են երկու հատուածի թեթև տարբերութիւնները, դոցանից մի երկուուը սրբագրում են Խոր, ձեռագրի տարբեր ընթերցուածներով։ օրինակ Սեղ. «առ ի նորա վարս», Խոր. Յ ձեռ, ունի ցտո ի նորա վարս». Սեղ. «Համբերողական», Լամբր, ձեռ, «Համբերողական», իսկ մասցեալ թեթև տարբերութիւնները, ինչպէս են Սեղ. «ոչ ուրիշ», Խոր. «երիկ ոչ», Սեղ. «բարիսկամ», Խոր. «լաւակամ», Սրամապայծառացեալ Խուպայծառ. և լըն ինչպէս նկատել են պ. Խալաթեանը և Տէր-Մկրտչեանը, Խորենացու նացու կոկած ձեւերն են։

Համառուս վարքի համապատասխան հատուածը աւելութիւն հիմ համարում է համարում առաջ բերել. հետաքրքրութ-

1 Համեմատիր Գ. Տես-Մկրտչեանի «Առողջացու ժամանակը ուղարկու հար փորձ»։ «Արարատ» (1897 էջ 422-424) եւ Եր-Խալաթեանի «Առաջ և Առաջնյա ապրիւնենի մասին»։ «Համեն Ամսութեայ» (1897 էջ 337—340), համեն նորայր Բրիգանդի Յուլիսի 25-ին առ ինձ ուղար մասնաւու համակոււ նշանակուած են խնդրական հատուածների էջերը (տես 7—8. Ա. յիշեալ յաղուածի ծանօթութիւնը)։

2. Հ. Պ. Սարգսիանը դրա վկուն 12-րդ դարու «կարկասական» համարեալ կամարեալ և երբ հաստատակ ուրիշ բան և ապացուել դմւտանումն գեր խնդրվածներիւր՝ աշխարհութիւնը ուղիկու դրակուած առաջական անփառականուրին չէ բայցունում եւ ու էլ սիալ խոսովանելը մելք համարում։

Ները կարող են բնագիրը կամ վերոյիշեալ յօդուած-
ները համեմատել. համաստը շատ է տարրերու մ:
Պ. Խալաթեանի ենթագրութիւնը՝ թէ Խոր. հա-
տուածի սկզբի «գերազանցեալ» բառը, փոխանակ
բարեխայելացեալի, Փ. Սոկրատիցն է: կարծում ենք:
ոչ մի հիմք չունի: «գերազանցեալ» շատ սովորա-
կան բառ է: եթէ այդպիսի բառերի համար աղբիւր-
ներ որոնենք, այլ ևս ով կունենայ իւր աշխատու-
թիւնը:

2.

ՎԱՐԹ ՍԻԿԻ. ԵԶ 715.

ՄՈՒՍԻՍ ԽՈՐԵՆ. Գ. 29.

Հետո բարեխամատագոյն մեր Հետո բարեխամատագոյն Վա-
պատկերազման Սարմատացոցն դեկի պատկերազման Գրացն յակ-
դրձի: 4:

Այստեղ ոճական փոխառութիւն է և ցոյց է
տալիս, որ Խորենացուն ծանօթ և ընտանի էր Սեղ-
րեսրոսի թարգմանի ոճը:

3.

ՎԱՐԹ ՍԻԿԻ. ԵԶ 710—727.

ՄՈՒՍԻՍ ԽՈՐ. Բ. 83.

4. (Խոստա) ոչ գիտեր զառ-
ի պառակեն ծնկարն . . . որ ի
Հեղինեաց (740):

5. Ըստ Խոյն առուրս լինին հար-
ստիք և Մաքրիմնայ գտաքրն
Դիսկետիանոսի (ի Խիլոմիդայ),
փեռայնալով նման Խոստանցիա-
նոսի հետորի: որդուց Խոստա
Բագատորին Համայա:

2. Խոստանդինու կոյսր պա-
տանեալ գուղվ . . . պարտաւալ
. . . արանեալ էր . . . տեսանէ ի
գիշերին . . . յորում ննջէ (744)
տեսի ակներեւակի յերինի խոչ
. . . աստեղաց (Ճառընտ- աստ-
դայա): այսու յազթեա (745) . . .
Հրամայեաց անենէ զարտինակ
խոյնի . . . և անենէ առաջի . . .
պատերազման յազթեաց (746):

2. որ ոչ էր ի գտաքրեն Մաք-
րիմնոսի: այլ Հեղինեալ պան-
կէ ծնեալ: . . . (նև յետ ոչ բա-
զում մասց մեռեալ կոստանց:
փախանորդ նման առաքէ Դիսկե-
տիանոս զնորին որդի և զեր
որդիացեալ Խոստանցիանոս):

3. Դիսկետիանոսի Բագատորի . . .
խորեցաւ . . . վասն Խոստա-
դինոսի կայսրը որդուց Խոս-
տայ Բագատորին Հանովացեաց
. . . փեռայցաց տեսել ի գու-
տը: Մաքրիմնայ (749) . . .
հեղն առա Հարստինի Խոստա-
դինոսի և Մաքրիմնայ (720):

4. Սա յառաջ բան զրագաւո-
րել մինչքեռ կեսոր էր: զար-
տեալ ի մարտն և արանեալ թեմոք
մեժաւ ննջեալ: Երեսթացաւ
նման ի քանի խոչ տառեցեալ յերկ-
նից: պարտեակեալ զրով տակ:
այսու յազթեաց զար արարեալ
(սիրզնոյթ) և յառաջարեալ
յազթեաց զատերազմացն:

4. Խոկ Խոստանդինու Բագա-
տոր զՄաքրիմնայ Դիսկետիանոսի
նոսի (721) զաւոր անեւով կին:
զրովում ի քրիստոնեց ստա-
կեր: և ինքն եղափոխական բո-
րութիւն ըստ բուլոր ընկալ-

4. Բայց յետոյ Հարազուրեալ ի
կինչն իր մեջ Մաքրիմնայ: ի
զատերեն Դիսկետիանոսի: յո-
րոց հալածան և կնուցեալ: և
զրովում վկայեալ: ինքն եղե-
տագուական բորութիւնը ըստ

հոլ մարմնոյ վիրաւորեցաւ:

Առողջ Արքագիւն բառեւ և
ի Մաքրիմնան բժիշկու: Առողջ
և ալ միոյն նորս (Ճառընտ-այլը):
ոչ մի համար ի Պարսից ամենու յա-
ման համեմել (722):

3. Ուսակը . . . ի քրիստոնց տա-
ճարին ասելով պարտ է աւա-
զան լինել . . . և նույն զնա ար-
եամբ . . . մանկանց . . . չերմ գուղվ . . .
րազմութիւն մանկանց ամին:

6. Մարդ մանկանց (723) . . .
սկզի մեծաւ գուղվով . . . կակա-
նագու ողբազ (724): Այ պար-
աւալ թագուարոն . . . նախամեծա-
րել պատուեմ քան զին տաղ-
ջամի զանապական տպայցն
քրիստութիւն (725):

7. Ան ի նմին զիւերի տեսա-
նէ . . . երեցան սուբբ տառքեալ-
քին . . . ասելով . . . զա առաքե-
ցեն առ է լերին Սերազ-
մանինու (726) թագուցեալ . . .

ցուցանէ քեզ կորսոցէ աւա-
զուացաւութեան յորում թագու-
ցեալ Սերազմագիւն (727):
Ցանինէ ի ձեռն Սերազմա-
րազիստով Հառմայ: որ ի
զան բարեպաշտութեան յորում
նման հալածանցն թագու-
ցեալ էր ի Սորականն լեռնան:
(Ցանինէ և աշեկերտաւ հա-
ստացաւ զրանուրոն մանեացն
բառաւով Խառունյ յերեաց
նորաւ որպէս համաստ ու-
սուցանէ քեզ Աղաթանգի-
շուն): 4

Պր. Խալաթեանը արտազրում է Սեղբեստրոսի
համարեա ամբողջ հատուածը և ստորագծում նման
բառերը: մենք դիտամամբ բաղուածօրէն ենք վիրա-
տագրել և թուահամարներով համեմատութիւնը հեշ-
տացրել:

Այս հատուածը ես արդէն բաղդատել եմ յա-
ռաջարանիս մէջ (էջ Ծ—ԾԴ) և թէկ գտել էի
աակնյայտնի նմանութիւնները և նոյն իսկ բառացի
արտազրութեան չետքերը: բայց իսկական եղբակա-
ցութիւն չէի հանել: ոչ թէ շինչ որ կանխակալ կար-
ծիրի շնորհիւ նախավճռել էին վիճելի ինդիրը: ինչ-
պէս Պրոֆ. Խալաթեանն է ինձ մեղազրում: այլ ու-
րովին ետք նորենացու երկու կէտը ինձ մոլորեցրել էին:
առաջինն է յիշեալ զիսի մէջ գործածուած սփրւգոյնն:
բառը և ապա զիսի վերջում Ազաթանգիզոսի ակնե-
րեակի յիշատակութիւնը: Երբ նկատուել է առաջի
մեծ բառական փոխառութեան հատուածը, իբրաւ հեշտ
է հասկանալ, որ Խորենացին զիտաւորեալ նախա-

1. Տես Գր. Խալաթեան յ. 8. էջ 341—343. հա-
մամայն իվ նրա հիմ, որ Խորենացու միայն վերջի տողեն
ին Ազաթանգիզոսի վիրաբերում է ոչ ամրող զրոխը:

մտածած ծրագրով ցանկացել է շիփոթեցնել իւր ընթերցողներին, ի՞նչ կասկած որ երբ նա օգտուում էր Սեղմեստրոսի վարքից, այդ վարքը արդէն ձանօթ կլինէր ժամանակակիցներին, բայց թէ նա ինչ հանձարեղ վարպետութեամբ կորցնումէ իւր գործ գրած աշխիւրի հետքերը, այդ պարզ է, երբ կարիք է զգում Մեսրոպին բարձրացնելու, նա առանց քաշուելու արտագրումէ Սեղմեստրոսի վարքը, — անձանց տարբերութիւնը ապահովում էր նրան, իսկ երբ պատմում է Կոստանդի և Սեղմեստրոսի վարքը, նա քաղուածներ է անում յետ ու առաջ գասաւորութեամբ, մէջը հիւտումէ Տրդատի պատմութիւնը և վերջն էլ տալիս իւր աղբիւրի անունը: Եօ այդ մարդու համար գեռ միքանի ամիս առաջ զրի իմ: բայց ոչ ոք (բացի Կարիէրից) չէր յայտնել այն աստիճան ծայրահեղ կարծիք, հաստատուած այդքան հիմնաւոր թուացող փաստերի վրայ, թէ նա (Մ. Խոր.) կեղծել է: թէ երկար ժամանակ կարողացել է խարել ընթերցուներին և որնա երկու երեք դար ուշ ապրելով և գրելով կեղծելու արտակարգ ընդունակութեամբ զգալ չէ տուել այդ կեղծիքը (Էջ 10^o). և այսօր ստիպուած եմ խոստովանուել, թէ նա իւշել է, և ամենամեծ վարպետութեամբ՝ հէնց մեր համեմատած զլուխը:

Աւերեմն համացյունուելով պ, Խալաթեանի և Գ. Տ. Մկրտչեանի հետ, ես էլ ընդունում եմ որ Մ. Խորենացին շբառուէ է 676 (թ. Հոյերէն լեզուով թարգմանուած Սէբէռուրուն: Շբառուն: Հետևապէս նրա պատմութիւնը այդ տարեկթուից ուշ է:

Հ. Բ. Սարգսեանը իւր յօդուածի մէջ (Էջ 569) փորձումէ ցցց տալ որ Խորենացին օգտուել է ոչ թէ Սեղմեստրոսի վարքից (նա սխալմամբ դրել է Մեծ Սոկ. 2): այլ Խոսիգնոսուի պատմութեան յունարէն բնագրից: բայց երեսում է որ նրա ձեռքը գեռ հասած չեն եղել Խալաթեանի և Գ. Տ. Մկրտչեանի յօդուածները (թէ նա լաթեանը և Տ. Մկրտչեանը դրել են Հոկ. Նոյ. ամիսներին, իսկ Հ. Սարգսեանը Դեկտ.), այլապէս կտեսնէր որ այստեղ օտար

1. Տես Հ. Բ. Սարգսեան: Սոկրատայ հիմ բարգմանուրկան հրատարակուրին և Մ. Խորենացի: Բագրավիկ. 1897. էջ 565—575:

2. Վերապատուելի Հայր, Դուքին հրատարակուրին պահածաս կը անուսենի: յառաջարանի մէջ դրա մազը մնանակ ինձ վրայ եմ տնել: բայց երկ Զեղ մօսաւորապէս յայտնի լինէին սկագրուրիկան դժուարութիւնները, զուցէ այլ կերպ դատիքի: Եւր վիրաւուանի գուցէ մասամբ իխաս պասախանը լսելով յառաջարանի մէջ, Եւր նկնական յօդուածի մէջ սասիկ տեմնական կը ցանկացի եր թննուրեան մէջ ուրիշ լիզու լիզու: Դուք Եւր կարծիյն հարկաւոր կը համարեալ և անուսեն յառաջարանի մէջ: Եւր գուցէ այս պատմութեան մէջ: պ, Խալաթեանն էլ հէնց այդ հատուածն է քննել և բազդատել բայց վերջը եկել է այս եղանակացութեան: Քո կապէս (Խորենացին) օգտուել է Փ. Սոկրատից, առանց այլ դարձուած կէլ այս անգամ դէպի Մեծ Սոկրատը (Էջ 385): Եթէ այս գէպը ում էլ աչք չէ գարձել զէպի Մեծ Սոկրատը ինչո՞ւ չցոյց տալ թէ ուրիշ բնչու անգամ է

Եղուից թարգմանութեան խնդիր չկայ, որ յոյն հին կամ նոր աղբիւր որոնենք: այլ կայ միայն հայերէն թարգմանութեան արտագրութիւն:

Բ.

ԽՈՐԵՆԾՅԻ ԵՒ ՄԵծ ՍՈԿՐԱՏ:

Անցնենք երկրորդ խնդրին. Խորենացին օգտուել է 695—696 թուի թարգմանուած Մեծ Սոկրատի հայերէն բնագրից, թէ ոչ:

Մենք մեր յառաջարանի մէջ եկել ենք այն եղանակացութեան, թէ և Խորենացին գժրախտարար չէ ունեցել իւր ձեռին Սոկրատի պէս պարզ և ճիշտ տեղեկութիւններ տուող մի պատմազիրը, ժիստելով, որ ոչ յունարէն բնագրիը և ոչ էլ հայերէն թարգմանութիւնը նրան աղբիւր են ձառայի: Իմ քննագրաներից Հ. Սարգսեանը (Էջ 570, 571) պնդում է, որ հակառակն է աւղիդ «յունարէն բնագրի նկատմամբ», բայց փոխանակ փաստեր տալոււ գժրախտարար անցնումէ՝ միայն ընդհանուր գատաղութիւններ տալով. «մեր նպատակէն գուրս է այստեղ կանգ առնուլ ցոյց տալու համար: թէ Մովսէս ի՞նչ բաներ Սոկրատէն օգտուած է և ինչ բաներու մէջ կը համաձայնի Եւսեբիոսի և ուրիշ պատմազրաց. վահան ոյտ ոյտ ու բնիւրութիւն շնչ ուրուսած էն ու ու շնէ շնէ շնէ շնէ շնէ (?), և մենք իսկ առ Կարիէր ուզգած պատասխանին մէջ զանացեր ենք մատնանիշ ընել: Ընդհանուր գատաղութեանց առաջ զըխն ասելիք չունենք. հարկաւոր և անհրաժեշտ էր ամենափոքր, բայց հաստատ փաստութեան ինչո՞ւ պէտք է խառնել խնդիրները. ինչ հարկ կայ Խորենացու «աղբիւրերից» մասին խօսել, որոնցից շատերը յայտնի են իր Խորենացու վկայութեամբ, շատերն էլ ոյց են ուրուսած ուրիշներուն ներուն դոցամէջ է արդեօք Սոկրատը. Այդ չկարողացանք իմանալ Հ. Սարգսեանի ասածներից:

Պրոֆ. Խալաթեանի կարծիքը կարևոր կլինէր, եթէ նա խուսափողական ձանապարհ ընտրած չինէր, նա որ շարունակ ուօսւմնասիրումէ Խոր. պատմութիւնը և անշուշտ քաջ առաջ մի փաստ չէ բերում հաստատելու իւր այս ասածը. և Խորենացին որ ամշուշ զիսկ Մեծ և Փ. Սոկրատին (յ. տ. Էջ 354), եօ Խորենացու և Մ. Սոկրատի մէջ նմանութիւններ գտել էի միայն Արաց գարձի պատմութեան մէջ. պ, Խալաթեանն էլ հէնց այդ հատուածն է քննել և բազդատել բայց վերջը եկել է այս եղանակացութեան. Քո կապէս (Խորենացին) օգտուել է Փ. Սոկրատից, առանց այլ դարձուած կէլ այս անգամ դէպի Մեծ Սոկրատը (Էջ 385). Եթէ այս գէպը ում էլ աչք չէ գարձել զէպի Մեծ Սոկրատը ինչո՞ւ չցոյց տալ թէ ուրիշ բնչու անգամ է

օգտուել. և արգե՞օք հայերէն թարգմանութիւնից, թէ յունարէն բնագրից: Նա խուսափելով իւր վերջին երկու եզրակացութեան մէջ էլ շեշումէ միայն Սոկրատի հօմեներորդ դարու թարգմանութեան համառութիւնը և Սեղրեսարոսի նշյալէս եօմեներորդ դարու վերջում՝ կատարուած ընդարձակ և համառու քրագմանութիւնները (?), առանց յիշելու հայերէն Մեծ Սոկրատը կամ նրա յոյն բնագիրը:

Աւրեմն մենք չենք գտել, մեր քննադատներն էլ չեն ցոյց տուել թէ Խորենացին ինչ գեպերում է օգտուել Մ. Սոկրատի յոյն կամ հայ օրինակներից, մինչև այդ ցոյց տարուի, նա չէ կարող Խորենացու ազրիւների կարգում հաշուել:

Գ.

ԽՈՐԵՆԱՑԻ ԵՒ ՓՈՔՔ ՍՊԱՐՏԸ.

Անցնենք երրորդ, և իմ կարծիքով ամենակարեւոր խնդրին, Խորենացին ծանօթ էր Փոքք Սոկրատին, թէ հակառակն է ուղիղ: Եթէ 676 թիւը այժմ Խորենացու պատմութեան ամենահին յայտնի թուականն է, որից առաջ նա լինել չէ կարող, ազաեթէ ցոյց տրուի այս երկու պատմագիրների կապը և հաստատուն առնչութիւնը, այն ժամանակ կունենանք Խոր, պատմութեան մի երկրորդ տարեցըն այդ յետոյ և կամ որից առաջ առաջ, անհնար կլինի նրա պատմութիւնն ընդունել:

Խմ բացատրութիւնները՝ թէ Խորենացին է Փոքք Սոկրատին աղբիւր ծառայել, պ. Խալաթեանին չեն համոզել, նրա կարծիքով պ, Կարիէրը արդէն հակառակն ապացուցել է. Խորենացին, ասում է նա (էջ 292), Ճանաչել է հայերէն Սոկրատի պատմութիւնը, այդ ապացուցել է, և մեր կարծիքով, համազեցուցիչ կերպով, Պրօֆ. Կարիէրու, —Պէտք է Հայերէն Սոկրատ. Փոքքը հասկանալ, որովհետեւ պ, Կարիէրին միայն այդ էր յայտնի, Խոկմենք կարծում ենք և համոզուած ենք, որ աւելի համոզեցուցիչ կերպով հակառակն ենք ապացուցել: Ի հաստատութիւն Կարիէրի կարծիքի պ, Խալաթեանը համեմատում է Մեծ Թէոդոսի պատերազմը բոնակալ Նւգէնիոսի գէմ (Սոկր. Ե. Գլ. 25 էջ 480) և Հայոց պատերազմը դաւաճան Մեծրուժանից առաջնորդուած պարսիկների գէմ Զիրաւի դաշտում (Խոր. Գ. 37-րդ գլուխ), Խորենացու այդ զլուխը ըստ Խալաթեանի միքանի աղբիւրից յօրինուած մօջակի է: Որի մէջ «Ե խմբացաւ պատերազմն, որ կոչի, մինչեւ պարեցաւ, հորին ընդդկմ, ի վախուս դարձուցաներ, զօրին քշնամաց» և լուսակացին քարերը առնուած պիտի լինին Փ. Սոկրատի վերջիշեալ պատերազմի նկարագրու-

թիւնից, «ուր Փ. Բիւզանդ՝ թէ կերպարանափոխուած, պատմութեան հիմքն է կազմում» (էջ 292—293): Ես հաւատում եմ և ընդունում որ Մ. Խոր. Խոկապէս յայտնի գրուածքներից «մօզափէ» կազմել սիրումէ, ինչպէս այդ ցոյց է տուել ուրիշների հետ ինքը յարգելի գիտնականը: Ի բայց թէ մի որեւէ պատերազմ նկարագրելով Խորենացին ստիպուած լինէր դիմելու Փ. Սոկրատի պատմութեան պէս մի խեղճ գործի և այնտեղից փոխ առնէր զօրք, թըշնամի, պարտեցաւ, հողմ, պատերազմ, ընդդեմ, լոկ հայերէն Ալամենասովարական բառեր, այդ մենքը ըմբռել չենք կարողանում. որովհետեւ չենք ընդունում թէ Խորենացին այդքան սահմանափակ, Հատիներէն շարագրութիւն գրող աշակերտի յատկութիւն ունեցող մէկը լինէր, որը իւր գրութեան մէջ յարմար թէ անյարմար գործ է ածում Կիկերոնի: Յ. Կեսարի և լուսնիքի, սովորովի ոճեր ու բառեր, այլ է եթէ պ. Խալաթեանը իւր համեմատած հատուածի մէջ ցոյց տար այնպիսի բնորոշ փոխառութեան օրինակներ, ինչպիսիք շատ կան Գր. Խստուածարանի գործերի մէջ (Համեմ. իւր իսկ քըննութիւնը «Վրարատանի» մէջ օր. 11, 12, 13, 14, 15, և լու. և սոքա աշակերտական փոխառութիւնները չեն):

Մի ուրիշ հարց. Փ. Սոկրատի և Խորենացու նման գարձուածների մի մասը կայ նաև Մեծ Սոկրատի մէջ, միայն քերականական թեթեւ փոփոխութիւններով և փրեն յատուկ աննշան յաւելուածերով, և հէնց այդ գործութեամբ կարիք ուներ «մօզափէ», կազմելու, ի՞նչը առ աւելի մեծ է եղել այդ կարիքը Սոկրատի համառօտչի համար, որ խեղճ և սահմանափակ մէկն էր: Թէ այդ նոր, պ. Խալաթեանցի շատ անդաշող կերպով բաղդատած, հատուածում և թէ Վրաց դարձի ու Կոստանդնուպոլիս մեծի բրոտութեան պատմութիւնների մէջ Խորենացն և Փոքք Սուբրուս իրար համար էն այդ կարելի է տեսնել, բայց նմանւում են այնպիսի մասերով որ նկատ Մեծ Սուբրուսի և Ուբրուսի ընդունութիւնների մէջ, Պր. Խալաթեանը ինձ հետ համաձայն է, որ Փոքքը երկուսի համառօտութիւնն է «փրեն յատուկ յաւելուածներով», թէնա իւր վերջի եղբակացութեան մէջ ինդիրը շփոթելով կրկին՝ երկու «մարդամանութիւնների» մասին է խօսում. Արդ՝ բնական է

1. Համեմատիր Արա բնեուրիւնը. «Մովսէս Խորենացի» և իւր աղբիւները. Գրիգոր Աստուածարան». Յանիսած «Արտաքառ» 1897 թ. նոյ. Կեկ. կը 531—539.

երբ Խորենացու աղքիւրն ենք որոնում, որոնենք նաև Փոքր Սոկրատի իւրատեսակ յա-Ելուանների աղքիւրը, որոնք սնկասկած հայկական են, և ոչ թէ առանց փաստի ընդունենք թէ հէնց Խորենացին է ամեն ինչ վերցրել. Ուրեմն մի առժամանակ Մեծ Սոկրատը մի կողմ մողնենք և քննենք Փոքրի յաւելուածների խնդիրը, ինչպէս որ վարուել ենք զլիսաւորապէս մեր յառաջարանի մէջ 12 հատուածները բաղդատելիս, որոնց գարձեալ քննութեան կենթարկենք.

Հատուած 1. (Յառաջ. Սոկր. էջ ծ. պլ. Խալ. յօդ. էջ 342.)

Յառաջարանին այս առաջին հատուածում բաղդատուած է կեսար Կոստանդինի կրած պարտութիւնը Բիւզանդացիներից և աստեղանշան խաչի տեսիւթեալ կրկնում: Պր. Խալաթեանի հետ ընդունում եմ որ Ընդ. Սեղը. է Խորենացու աղքիւրը, բայց աւելացնում եմ: Դ բայց չկայ որ Խոր. վերցրած լիներ համառօտ Սեղբեստրոսից, և կարիք էլ չկար, որովհետեւ ամենը կայ Ընդարձակում: տարբեր համառօտից:

Հատ. 2. (Յառ. էջ ծ. պլ. Խալ. էջ 342.)

Քաղցատուած է Կոստանդին մեծի բորոտութեան, անմեղ մասուկների զոհելու զիտաւորութեան և Սեղբեստրոս եպիսկոպոսի ձեռքով հրաշքով աղատուելու պատմութիւնը, Խորենացու աղքիւրը Ընդարձակն է, բայց նա ունի մի քանի գարձուածներ և բառեր, որոնց նմանը կան և Փոքրում: Թէ Խոր. և թէ Փոքրի մէջ դրա բյուռմ են ուղղակի Մեծից և ցոյց են տալիս փոխ առնողի ինքնուրութիւնը: օրինակ.

Խոր. բայց հրապուր. Ընդ. Ա. իսկ կին նորու Համ. Ա. բայց հրանուի ի կնուն իւրեւ գրդովեաց զնա հակա պուրեալ ի կնուն Մաքրինայ.՝ յարոյ ուկ քրիստոնէից . . . իւրեւ Արքունիքու. . . հաւածանն եկեղեցոյ գրալում ի քրիստուրար հաւածանն եւ կրազում վեպիւու. . . եկեղ աստակեր . . . կեղեցոյ, բազումք ի Պարսից և ի Հնդկաց ի Պարսից եղին վկայուք . . . մարմար վիրաւորե ի Պարսից և ի Հայոց. եցաւ. ցու. մարմար. . . ապակներ. քուրմք ամոնք ի գիւաց. քուրմք ի գիւաց.

Ընդարձակի «Վրդովեաց» բառը Խոր. և Փոքրի մէջ գարձել է «Հրապուրեալ», իսկ երկուսն էլ քրիստոնեաների մասին չկամենալով «սատակէր» գործ ածել, փոխել են «յարոյց (արար) հալածանս եկեղեցւոյ» . . . Այս դէպում երկուսն էլ միենոյն աղքիւ-

րից են քաղում. զուցէ երկուսն էլ անկախ նոյն ձեռք են կրծատել. կարեարն այս է, որ ընդհանուր աղքիւրը երկուսի ձեռքն էլ տալիս է նիւթը, երկրորդ աղքիւրի զիմելու. կարիք չկայ, Միակ թէսկան մնում են Խոր. «ի Հնդկաց» . . . իսկ Փոքրի «ի Հայոց, յաւելեալ բառերը, Հետևապէս այս հատուածը անհամար կերպով խնդիրը վճռել է կարող, ուրիշ փաստ որոնենք և յետոյ ինքն իրան այս հարցը կվճռուի:

3. Հատ. (Յառաջ. էջ ծ. պլ.)

Համեմատուած է Լիկինիոսի կայսր կարգուիլը Կոստանդին մեծից: այս հատուածը ամրող կը կրկնենք:

Խոր. թ. 88.

Փ. ԱԿԱՑԱ էջ 5.

«Ի բանակն Աստուծոյ զրոնաւոր ամենայն յերեաց Կոստանդիոս գիմես» զարգութիւն մինութիւն մեծամուս թագուարացն: և առ նմա կառթեան զԼիկինոս քեռույր իւր բայց իւր ու համամայր: Ճիրանեալ գաւորեցացներ: և պահու կայսերական զարգարեաց զնա: և յերկորդական հասուցեալ պատիւու: պատիւու: արեաց ամենայն արեկելից կացոյց» Նախադասութիւնը բացատրելու համար: իրաւ և Մեծի մէջ կայ. «կեսոյր (Լիկինոս) յարեւելս, բայց թէ պատուով երկորդական էր, երկուսի մէջ էլ ոչինչ չկայ, Մինչդեռ տեսանք թէ Խոր. Սեղբեստրոսի վարքից զարքից օգտուելիս շատ անգամ քերականական ձեւերն էլ է պահպանել, ինչու այստեղ այդքան տարբեր, և սրտեղից են նրա յաւելուածները, որտեղից է Փոքր. ի աղքիւրը: Աւրեմն Խորենացու հատուածը Մեծ և Փոքր Սոկրատներով չէ բացատրուում: Հարկաւոր է ուրիշ աղքիւր որոնել. Փոքր Սոկրատը տարբեր է պատմում իւր բնագրից, նրա ու-ընդէլունիւն բայց ու-ընդէլուն իսկ Խորենացուն ոչ: Թէ Կոստանդինը «միահամուռ» թագաւորեին յաղթեց, այդ չկայ, Մեծի մէջ, գա է Խորեն, «ի բառնալն զրբուաւորն ամենայն, և թէ Կոստանդինոս զքեռայ իւր թագաւորեցացները զրա միտքն էլ կայ Խորարայ կացոյց բառերի մէջ, Այստեղ փոխառու:

Հայոց կայսերական արքունիք ամառն առ ի քրմանց. քուրմք ի գիւաց.

թիւնը բառական չէ, այլ մտքով՝ բայց նախընթաց հաստատում մննի տեսանքը բառացի նմանութիւններ, այստեղ ինդիրը չկարողացանք հաստատապէս որոշել, իսկ այստեղ երբ պարզ երևումէ թէ երկու սից որը կարող է կախում ունենալ միւսից, նախընթացի անպատճանան թողած հարցը իւր լուծումն է ստանում:

5. Հաստ. (Եջ կի—կի) (4-ը թողնումները իրեն անկարելոր.)

Խոր. Բ. 88 զիսում՝ պատմումէ Բիւզանդիան քաղաքի վերաշնուրթիւնը Կոստանդին Մեծի ձեռքով, նա «յանրջական իմն նախատեսութեանց հրամայեալ» քաղաքը վերակոչումէ «Նոր Հռոմ», իսկ աշխարհ կոչեաց զնա Կոստանդիանու քաղաք, Քաղաքը զարդարելու համար «գաղտնի եհան ի Հռովմայ զասացեալսն պաղաքն քերածոյ, և եղ զնա ի դուռիման», Մեծ Սոկրատը նրանից առնելով Փոքրը, ունեն այս պատմութիւնը, էութեամբ նման Խորենացուն, մանրամասնութեան մէջ տարրեր, Մեծը միայն այսպան է ասում, որ Կոստանդին թագաւորը իւր իշխանութեան 20-րդ տարին «յնկեան իսկ համանուան» Բիւզանդիինը մեծամեծ պարիսպներով և շինութիւններով զարդարեց «հաւասար թագաւորեցելոյն Հռովմայեցոց Կոստանդնի քաղաք անուանելով, երկրորդ Հռովմաբրացոյց . . . և զդիվունն զերեբուտեանսն յասպարիս նոր քաղաքին զները»: Աշխարհ չկայ ոչ երազի և ոչ էլ «պաղատինու» ու «փորսին» մասին: յետոյ այստեղ Կոստանդինը ինքն է քաղաքի անունը փոխում, «Կոստանդնի քաղաք անուանելով, իսկ Խոր. մէջ Կոստանդինը անուանեաց ոչ երազի նոր քաղաքին զները»: Տեսնենք Փոքրը ինչպէս է պատմում, արգեօք նա հետեւումէ իւր բնագրին թէ ոչ Թագաւորը արեւատքից «գառնայր» (ունի Խոր. Մեծը չունի) «ի Կոստանդնուպոլիս» (Խոր. ուղիղ ունի «Բիւզանդիոն») և «ըստ տեսլիքն ցուցակութեան» զարդարեց շինութիւններով, ինքն անուանելով Կոստանդինա քաղաք և «երկրորդ Հռոմ» տիրացոյց ի վերայ աշխարհիմ», շարունակութիւնը Մեծի պէս է: Այստեղ էլ բնականարար առաջ են գաւլիս նոյն հարցերը, երկու գրողներից ո՞րն է միւսի աղրիւրը: Խորենացու պատմուածի զանազանութիւնները չեն մեկնում ոչ Մեծ, ոչ էլ Փոքր Սոկրատը, և ոչ էլ երկուսը միասին առած, պէտք է զարձեալ երրորդ աղրիւրի դիմել, որից նու պէտք է վերցներ «պաղատին» քերածոյց և «փորոն» դարձուածները, Մինչեւ Փ. Սոկրատի երազի և մանաւանդ «աշխարհն» Խոսքի յաւելուածները բացատրում են

Խորենացու պատմութեամբ, ուրեմն եթէ կայ փոխառութիւն—իսկ այդ ընդունումն բոլորը, անպայման Խորենացուց է:

Այսպանը բառական եմ համարում երրորդ, Փոքր Սոկրատի և Խորենացու առնչութեան ինդիր մասին: աւելին ցանկացողները թող բարեհաջեն հրատարակութեանս յառաջարանի ԿԵ—ՀՀ. էջերը նորից ուշագրութեամբ կարդալ:

Խճ համար անհամողեցուցիչ, հիտեապէս անընդունելի մնացին պրոֆ. Խալաթեանի քննական յօդուածի եղբայրացութիւնները, որնք են.

ա. «Խորենացին ճանաչել է Սոկրատի եկեղեցական պատմութեան կորներորդ դարու հայերէն թարգմանութիւնը, կամ որ նոյնն է, Փ. Սոկրատը, և օգտուել է նորանից (Էջ 359.): Մենք տեսանք որ Փ. Սոկրատը Խորենացու աղրիւր լինել չէ կարող, այլ հակառակն է ուղիղ:

բ. «Խորենացին ճանաչել է Ս. Սեղմեստրոսի վարքի նոյնպէս կօրներորդ դարու վերջում կատարուած Ընդարձակ և համաստ հայերէն թարգմանութիւնները + (?) , և օգտուել է նոցանից . . . Ուղիղ է Ընդարձակի մասին ասածը, իսկ Համառատի մասին ոչ Աւոտի լրացնելով և ուղղելով մեր հրատարակութեան յառաջարանի եղբայրացութիւնները, ի նկատի առած մեր քննադատների ասածները ընդունում ենք.

մ. Խորենացին օգտուել է 676 թ. հայերէն Եղբուզ թարգմանուած Սեղմեստրոսի ընդարձակ վարքից, հիտեապէս այդ թուից առաջ չկար Խորենացու պատմութիւն:

ր. Խորենացին չէ ճանաչում Մեծ Սոկրատի ու հայերէն թարգմանութիւնը և ոչ էլ յունարէն բնագիրը:

1 Յարգիի Պրաֆեսորը մի ժկդ նեղնում է (Էջ 340), որ ևս Խորենացու աղրիւր յրենցներով Սոկրատի պատմութիւնը, ուրիշ «մեր ձեռքը յանած բարգմանուրիւն» եմ եկարդել, և յդիսիմ ինչ հիման վրայ իմ եկարդած մէ բարգմանուրիւնը էրքու, էրքու և կամ «շըշ-՛՛՛» կ պարմել, ուրիշն ուշեւութեան ինձ այն, ինչ ու յնի ասէք: իսկ այն կիսամի՞ն ևս արդիօք ցոյց տալ «Սու-էրուէ էրքու Հայ ՛՛՛՛՛-նիւ-նէն-էլլէ» (Էջ 358 և 259), ուրայ ինձն իրամ պարզութեան կակասում և ամեն ու ինձն մեն համապայնութիւնը ընդունել է մը Հայելն բարքանուն-նէն և դրամից կատարուած մի համաստը (Համ. Էջ 291, 292 և մասնաւութեան 359 . . . եղբայրացութիւնը):

Դ. Փռքը կոչուած Սոկրատը կրծատուելով եօմն ներորդ դարու վերջում կամ ութերորդի սկիզբ ները, իւր բնագրից շեղուելիս և յաւելուածներ ընդունելիս, օգտուել է ի միջի այլ հայ աղքիւրների, նաև Խորենացու պատմութիւնից:

Դ. Խորենացու պատմութիւնը, ինչպէս որ այ-

սօր ունենք, զրուել է Փրկչական 676 թուից մինչև եօմներորդ դարու վերջը, մօտաւորապէս նոյն դարու վերջի 20—25 տարիների շրջանում։

Մեսրոպ Վարդապետ։

1898 թիւ. 13 փետ.

Ա. Էջմիածին։

ԲՈՎԱՆԴԵԿԱԹԻԹԻՒՅՔ.

(Փետրուար ամիս)

ՀԱՆԳԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ԱՆՍՈՒՄՆԱԾԿԱՆ։

Եղիսաբեթուպուղուսոյ Հայոց այլեայլ քաղաքային օրէնքներն ու կարգադրութիւնները. 33: — Փաւատոս Բիւղանդացի և իւր պատմութեան խարդախողը. 38: — Քննութեան արժանի հէտ մը՝ Արա Գեղեցկին աւանդավէպին մէջ. 41: — Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ. 44: — Հաւաքածոյ Թրանսիլուանիոյ հայոց գաւառական բառերուն. 46: — Եղբայրական օգնութիւն», 51: — Ցիշատակիք Ռուբինեանց յերուսաղէմ և ի շրջակայս. 57: —

ԱՅԼԵՒ ԱՅԼԵՔ.

Նոր հրատակութիւնը. 58. Ազգային թերթերէ ծաղկէտիւննջ. — 1. Հոյերէն նոր թերթեր. — 2. «Նոր լոյս»: — 3. «Քիւրակն»—շարաթաթերթ: — 4. «Նուիրատուութիւն»: — 5. «Գրացիներու և հայ—կաթողիկեաներու ինդիրը»: — 6. «Եղբայրական օգնութիւն»: — 7. «Ներսիսեան գարոցի պատմութիւնը»: — 8. «Կտակիներու շուրջը»: — 9. Հայ գիտնական Դ. Կարակաչի գիտերտացիան. — 10. Հ. Գ. Զարբանալեանի յորելեամբ. — 11. † Գելիանով. — 12. Գաղ. Հայերէն ընդարձակ բառարանը. 60: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԹԻՒՆ. 63:

Թանգեղոս. 90. Կենդանաբան Երրահամ քահանայ կ. Պոլսեցի. 66: Նոր ուղերութիւն ի Առվիաս: Հնախոսական և ազգաբանական. — Հայք. 74: Հարցաքննութիւնը ուսանողաց Մուրատ—Համալսարանական վարժարանին Պագուայի. 79: Կատարեալի այլ վերջաւորութիւնը աշխարհաբարի մէջ. 82: Անութիւն Ասլանբէզի բարբառին. 83:

ՍՈՒՐՃԵՆԴԱԿ ԲԵՋՄԱՆԴԻԿԻ.

1. Հայ Քրիստոնեայ հոգեւորականներու նախական տարածն. 38. 2. Արաց մատենագրութիւն. 88.

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՍՈՒՐՃԵՆԴԱԿԻ.

1. Գրաբարի և աշխարհաբարի ինդիր (շար. և վերջ Գ. պատմանի (1897) Սուրհանդակի երրորդ հարցման) 89. 2. Գրաբարի և աշխարհաբարի ինդիր (Ե. պատմասին (1897) յունուար ամսոյ Սուրհանդակին Գ. հարցման) 93. 3. Գաւառական բառեր Ռուբիոյ և Սալմաստի Հայոց (պատմ. յուլիս ամսոյ (1897) Սուրհանդակի Գ. հարցման) 96:

Լևոնեան Հայկական վարժարան ի Հռովմ. 99. Քաղաքական ամիս. — Լուրիր ց25 յունուարի. 108. Զառանցանք (բնատղ. Աէս զիշերին մենաւոր առանձնութեան մէջ անտառում). 113. Նորայուր. 114. Պարունակութիւն ազգային պարբերական թերթից. 115.

Բ Ա Զ Ա Պ Ա Վ Ի Պ Ի Պ.

Եղիշէի պատմութեան շարագրութեան թուականը. 57. Մարտա Մծուրնացի կամ Անդ Ազա-

